ԿԱՐԾԻՔ

«Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ

2023 թվականի հունվարի 17-ին ՀՀ Կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքում (հետայսու՝ Օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծը, որը նույն թվականի փետրվարի 7-ին ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ, և նույն օրն էլ ընդգրկվել է հերթական նիստերի օրակարգ[1]։

Նախագծի առնչությամբ Ազգային ժողովում հասանելի տեղեկությունների համաձայն՝ օրենքների նախագծերի փաթեթը կառավարության 2023 թվականի հունվարի 12-ի N 47-Ա որոշմամբ համարվել է անհետաձգելի։

Քննարկվող նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերում են մի քանի էական ոլորտների՝

- Գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ու դատախազների կարգապահական պատասխանատվությանն առնչվող հարցերի հստակեցմանը
- Որակավորման հանձնաժողովի կազմին
- Պետական շահերի պաշտպանության հայցի ինստիտուտին
- Վերադաս և ստորադաս դատախազների փոխհարաբերություններին և դատախազների խմբի ձևավորմանը
- Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող օրենսդրական պահանջների հստակեցմանը
- Դատախազների առաջխաղացման ցուցակը կազմելիս բարեվարքության ստուգման վերացմանը

Ներկայացվող փոփոխությունների մեջ առկա են մի շարք խնդրահարույց և մտահոգիչ առաջարկվող կարգավորումներ, որոնք ներկայացվում են ստորև։

[1] http://www.parliament.am/draft_history.php?id=14062&lang=arm

- **Որակավորման հանձնաժողովի կազմի առնչությամբ**

Փոփոխությունների նախագծով առաջարկվում է Օրենքի 23-րդ հոդվածում 3-րդ մասից հանել «Արդարադատության ակադեմիայի ռեկտորը» բառերը, իսկ երեք իրավաբան-գիտնական» բառերը փոխարինել «չորս իրավաբան-գիտնական» բառերով:

Առաջարկվում է նաև հոդվածը լրացնել նոր՝ 6.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«6.1. Հանձնաժողովների անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել ՀՀ գլխավոր դատախազի հրամանով՝ հանձնաժողովի նիստերից երկու և ավելի անգամ անընդմեջ անհարգելի պատճառով բացակայելու դեպքում: Հանձնաժողովների անդամի լիազորությունները դադարում են այն դեպքում, երբ վերջինս ներկայացնում է համապատասխան դիմում կամ ազատվում է դատախազի պաշտոնից կամ զբաղեցնում է դատախազի այնպիսի պաշտոն, որի պարագայում խախտվում են սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները: Հանձնաժողովի անդամի լիազորությունների դադարման փաստն արձանագրվում է գլխավոր դատախազի հրամանով»:

Ներկայումս գործող «Դատախազության մասին» օրենքի 23-րդ հոդվածը նախատեսում է, որ Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության *ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական:*

Մի կողմից ողջունելի է որակավորման հանձնաժողովի կազմում իրավաբան-գիտնականների թվի մեծացումը, մյուս կողմից անհասկանալի է կազմից Արդարադատության ակադեմիայի ռեկտորին հանելը, ինչի առնչությամբ նախագծի հիմնավորման մեջ բավարար բացատրություն տրված չէ: Նախագծի հիմնավորմամբ սոսկ նշվում է, որ «գործող կարգավորումների պայմաններում կարող են առաջանալ շահերի բախման իրավիճակներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը առանցքային դերակատարում ունի դատախազների թեկնածությունների ցուցակի կազմման, ինչպես նաև դատախազների ատեստավորման գործընթացում, իսկ մյուս կողմից Արդարադատության ակադեմիան իրականացնում է դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը և դատախազների վերապատրաստումը[2]»:

[2] http://www.parliament.am/draft_docs8/K-491_Himnavorum.pdf

Նախագծով, սակայն, չի հստակեցվում, թե կոնկրետ ինչումն է արտահայտվում հնարավոր շահերի բախումը: Արդարադատության ակադեմիայի ռեկտորը որակավորման հանձնաժողովի կազմում քննություններին մասնակցում է հանձնաժողովի մնացած բոլոր անդամներին հավասար հիմունքներով, և այդ փուլում մասնագիտական գիտելիքների ստուգման արդյունքում ձևավորվում է թեկնածուների ցուցակը, ովքեր հետագայում ուսուցանում պետք է անցնեն Ակադեմիայում:

Արդարադատության ակադեմիայի ռեկտորի մասնակցությունը ոչ թե շահերի բախման խնդիր կարող է առաջացնել, այլ հակառակը առավել արդյունավետ դարձնել հետագա ուսուցումը, քանի որ ռեկտորի մասնակցությունը քննություններին հնարավորություն կտա առավել խորքային պատկերացում կազմել թեկնածուների ընդհանրական ուժեղ և թույլ կողմերի և կարիքների մասին, ինչը հետագայում հաշվի կառնվի Ակադեմիայում կրթության ժամանակ:

Այս առնչությամբ առաջարկվում է վերանայել նախատեսվող փոփոխությունն ու հանել Արդարադատության ակադեմիայի ռեկտորին Որակավորման հանձնաժողովի կազմից հանելու առաջարկվող կարգավորումը:

Միևնույն ժամանակ, առաջարկում ենք Որակավորման հանձնաժողովին առնչվող փոփոխությունները դիտարկել առավել համակարգային՝ «Դատախազության համակարգում պաշտոնի նշանակման կարգը» զեկույցում վերհանված խնդիրների և առաջարկությունների համատեքստում[3]:

- **Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող օրենսդրական պահանջների հստակեցում**

Նախագծով առաջարկվում է հստակեցնել դատախազների թեկնածուների տարիքային շեմին ներկայացվող պահանջը, քանի որ, ըստ նախագծի հեղինակների, պրակտիկայում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, որոնք Օրենքի առկա կարգավորումների տարաբնույթ մեկնաբանության տեղիք են տալիս: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացնում որևէ անձ, ում 22 տարին դիցուք լրանալու է 2 ամիս անց: Տվյալ իրավիճակում Օրենքը չի պարունակում հստակ կարգավորումներ, թե արդյոք տվյալ անձը կարող է մասնակցել մրցույթին, թե ոչ, քանի որ 22 տարին լրացած լինելը վերաբերում է դատախազ նշանակվելու ընդհանուր պահանջներին, այլ ոչ թե

[3] https://prwb.am/2022/05/31/zekuyc-2/

դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հնարավորությանը:

Այս առնչությամբ նույնպես առաջարկում ենք թեկնածուին ներկայացվող պահանջները, և հատկապես տարիքին առնչվող պահանջները դիտարկել և վերանայել առավել համակարգային մոտեցմամբ: Մասնավորապես, առաջարկում ենք վերանայել 22 տարեկան տարիքային շեմը և նախատեսել առավել բարձր տարիքային շեմ, առնվազն 25 տարեկան՝ հաշվի առնելով թեկնածուների ինչպես մարդկային կարողությունների, այնպես էլ մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձևավորման անհրաժեշտությունը: Նմանապես, կարևոր է դիտարկել նաև պարտադիր մասնագիտական ստաժի առկայությունը՝ որպես թեկնածուից պահանջվող պայման:

Նշված հարցի առնչությամբ նույնպես առաջարկում ենք դիտարկել «Դատախազության համակարգում պաշտոնի նշանակման կարգը» զեկույցում ներկայացված առաջարկությունները[4]:

- **Դատախազների առաջխաղացման ցուցակը կազմելիս բարեվարքության ստուգման վերացումը**

Առաջարկվող նախագծով ներկայացված են փոփոխություններ նաև Օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմման կարգավորումներում: Մասնավորապես, առաջարկվում է վերանայել արտահերթ կարգով համալրվող ծառայողական ցուցակները և վերացնել բարեվարքության ստուգման պահանջը:

Գործող Օրենքի 39-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ *2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիրն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան դատախազից պահանջում և ստանում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը: Որակավորման հանձնաժողովի նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկն*

[4] https://prwb.am/2022/05/31/zekuyc-2/

ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունն ստանալուց հետո՝ որակավորման հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում.

Առաջարկվող նախագծով նշված հոդվածի մասը նախատեսվում է հետևյալ բովանդակությամբ՝ *«2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որեւէ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որեւէ ցուցակում դատախազն ընդգրկվում է իր անմիջական վերադասի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա՝ գլխավոր դատախազի հրամանով:»*

Ինչպես կարելի է նկատել, արտահերթ համալրման դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ստուգումը այլևս չի պահանջվում: Նման փոփոխությունը Նախագծով որևէ հիմնավորում չի ստացել:

Այն անընդունելի մի շարք պատճառներով.

Նախ, բարեվարքության ստուգման բացակայությամբ դատախազների առաջխաղացումը հետընթաց քայլ է ընթացիկ դատաիրավական բարեփոխումների համատեքստում: Մասնավորապես, ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 ռազմավարությամբ ՀՀ դատախազության համակարգին առնչվող միակ համակարգային գործողությունը վերաբերում է դատախազների բարեվարքության ամրապնդմանը[5]: Մասնավորապես, ռազմավարությամբ արձանագրվում է, որ «Կառավարության առջև ծառացած հիմնական խնդիրներից է նաև բարեվարք, կոռուպցիայից զերծ դատախազական համակարգի ձևավորումը: Առկա կարգավորումները դատախազների բարեվարքության ստուգման սահմանափակ

[5] ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարություն, https://www.moj.am/storage/uploads/2022%20razmavarutyun.pdf

հնարավորություններ են տալիս և միայն պաշտոնի նշանակման կամ առաջխաղացման փուլում: Մինչդեռ կարևոր է ապահովել դատախազների բարեվարքությունը նրանց գործունեության ողջ ընթացքում, ինչը հնարավոր է երաշխավորել միայն որոշակի պարբերականությամբ իրականացվող ստուգումների միջոցով[...]: Դատախազների բարեվարքության շարունակական ստուգման նշված կառուցակարգը կնպաստի բարեվարք, կոռուպցիայից զերծ դատախազական համակարգի ձևավորմանը»:

Ստացվում է, որ Կառավարությունը մի կողմից ընթացիկ բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսում է դատախազների բարեվարքության ինստիտուտի զարգացում՝ նախատեսելով նաև դատախազների բարեվարքության շարունակական ստուգման մեխանիզմների ներդրում՝ ի լրումն պաշոնի նշանակման և առաջխաղացման փուլում բարեվարքության ստուգման, մյուս կողմից իր իսկ կողմից առաջարկվող օրենսդրական փոփոխություններով փորձում է վերացնել բարեվարքության վերաբերելի կարգավորումները՝ դրանով իսկ նվազեցնելով բարեվարք և կոռուպցիայից զերծ դատախազական համակարգի ձևավորման հնարավորությունը: Առաջարկվող կարգավորման պայմաններում պաշտոնեական առաջխաղացման կարող են ենթարկվել բարեվարքության գնահման բացասական արդյունքներ և խնդիրներ ունեցող դատախազներ:

Ավելին, նման փոփոխությունը ունակ է մեծացնել կոռուպցիոն ռիսկերն ու դատախազական համակարգի նկատմամբ անվստահության մթնոլորտը և առհասարակ վտանգում է Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման օրակարգը և դրանով սահմանված նպատակները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծից հանել Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի առնչությամբ առաջարկվող փոփոխությունները:

Առաջարկում ենք դատախազական համակարգում համակարգային փոփոխությունների վերաբերյալ քննարկում կազմակերպել շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ, ինչից հետո միայն ընթացք տալ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին:

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

«Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ»